



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն
31 հունվարի 2018 թվականի N 26-Ա

ՆՈՒՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր Ո Ւ մ ե մ .

1. Աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գևորգյանին 2018 թվականի փետրվարի 1-ից 3-ը ներառյալ, գործուղել ք. Երևան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն՝ մարզային գործակարգավորական խորհրդակցությանը մասնակցելու նպատակով:

2. Գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ն. Գևորգյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Կից՝ ՀՀ առողջապահության նախարարության 2018 հունվարի 30-ի N ՆԶ/933-18 գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ



2018թ. հունվարի 31
ք. Կապան